ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2024

Հարցումը և արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. ապրիլի 26-ին:

Որակի ապահովման բաժնի վարիչ՝ Հայրապետյան Ք.

մասնագետներ՝ Նախրատյան Մ.,

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Հարցման ընդհանուր նկարագիրը** 4
2. **Հարցման մեթոդաբանությունը** 4
3. **Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գմահատում**.....5
4. **Եզրակացություններ և առաջարկություններ** 12

1.Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից Համալսարանում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետության որակը գնահատելու համար իրականացվել է հարցում: Հարցման նպատակն է գնահատել, ուսումնասիրել, վերլուծել ուսանողների առաջարկությունները, դժգոհությունները, և դրանք հաշվի առնելով, ձեռնարկել միջոցներ՝ Համալսարանում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետության որակը բարձրացնելու ուղղությամբ:

2. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցումն իրականացվել է GOOGLE FORMS առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց հարցերից, որոնք մշակվել և կազմվել են ԳՊՀ որակի ապահովման և ակադեմիական քաղաքականության բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

1. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատում

Գավառի պետական համալսարանում 2023-2024 ուստարում առկա և հեռակա բաժիններում սովորող 651 ուսանողներից հարցմանը մասնակցել են 209-ը, որը կազմում է գործող ուսանողների 32 %-ը:

1. Ընդհանուր տեղեկություններ

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների

Ֆակուլտետը, բաժինը	Ուսանողների ընդհանուր թիվը		Հարցմանը մասնակիցների թիվը		Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը
	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա	
	Բակալավր/մագիստրոս	Բակալավր	Բակալավր/մագիստրոս	Բակալավր	
Բնագիտատնտեսագիտական	**114/27**	**173**	**52/13**	**19**	26%
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	38/9	-	11/4	-	32%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	10/6	99	8/3	10	18.2%
Տնտեսագիտություն	24/5	-	12/3	-	68.9%
Կենսաբանություն	-/3	5	-/1	-	12.5%
Բնապահպանություն և բնօգտագործում	-/-	3	-/-	-	0%
Սերվիս	17/-	14	8/-	2	32%
Համակարգչային ճարտարագիտություն	19/4	40	10/2	7	30%
Դեղագործական քիմիա	7/-	3	3/-	-	30%
Քարտեզագրություն և կադաստրային գործ	-/-	9	-/-	-	0%
Հումանիտար մասնագիտությունների	**108/40**	**189**	**71/23**	**30**	**36%**
Իրավագիտություն	29/18	107	18/11	12	26%
Պատմություն	6/6	17	6/3	4	44%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	20/10	55	16/7	12	52%
Հայոց լեզու և գրականություն	22/4	4	16/2	-	60%
Ռուսաց լեզու և գրականություն	-/-	6	-/-	2	33%
Անգլերեն լեզու և գրականություն	31/2	-	15/-	-	45%
Ընդամենը	**222/67**	**362**	**123/36**	**49**	**32%**
Ընդամենը	**651**		**209**		

1.1 Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների

Գծապատկեր 1.



Գծապատկերից պարզ է դառնում, որ հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողները, առավել պասիվ՝ Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները:

2. Ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին

2.1. Տեղյա՞կ եք, որ ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվում են ներբուհական, ներֆակուլտետային ուսանողական գիտական նստաշրջաններ.

Գծապատկեր 2.



Հարցվողների մեծամասնությունը՝ 75%-ը, նշել են, որ տեղյակ են ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող ներբուհական, ներֆակուլտետային ուսանողական գիտական նստաշրջանների վերաբերյալ:

«Ոչ» պատասխաններ հիմնականում նշվել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն, պատմություն, իրավագիտություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությունների ուսանողների կողմից:

Եթե այո, ապա երբևիցե մասնակցել եք ուսանողական գիտաժողովի.

Գծապատկեր 3.



Հարցվողների 18%-ն է միայն նշել, որ մասնակցել է ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող ուսանողական գիտաժողովներին: «Այո» պատասխաններ հիմնականում նշվել են Ֆինանսներ /ըստ ոլոտի/, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/, Տնտեսագիտություն մասնագիտությունների ուսանողների կողմից:

82%-ը նշել է «ոչ» պատասխանը: «Ոչ» պատասխաններ հիմնականում նշվել են Անգլերեն լեզու և գրականություն, Հայոց լեզու և գրականություն, Պատմություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Իրավագիտություն, Համակարգչային ճարտարագիտություն, Դեղագործական քիմիա, Սերվիս մասնագիտությունների ուսանողների կողմից:

2.2. Ամբիոնը խրախուսո՞ւմ է Ձեզ զբաղվել հետազոտությամբ և մասնակցել ուսանողական գիտաժողովներին:

Գծապատկեր 4.



Հարցվողների 58%-ը նշել է «այո» պատասխանը, 42%-ը՝ «ոչ» պատասխանը:

«Ոչ» պատասխաններ հիմնականում նշվել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն, դեղագործական քիմիա, սերվիս, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա, անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունների ուսանողների կողմից:

«Այո» պատասխան նշողները հստակեցրել են իրենց պատասխանները՝ նշելով հետևյալը.

- ✓ Տեղեկացվում ենք գիտաժողովների անցկացման մասին:
- ✓ Դասախոսները մեզ օգնում են պատրաստել գիտական զեկուցում, շնորհանդես:
- ✓ Ամբիոնի դասախոսները տեսական գրականությամբ են ապահովում, օգնում են գրված զեկուցումները խմբագրել:
- ✓ Ամբիոնը խրախուսում է: Որոշ դասախոսներ առանձնահատուկ կերպով են խրախուսում:

- ✓ Ամբիոնը տեղյակ է պահում մեզ ու հանգամանորեն բացատրում գիտաժողովների կարևորության մասին:
- ✓ Ֆակուլտետում բավականին ջերմ և բարիդրացիական հարաբերություններ են ուսանողների և դասախոսների միջև: Ամբողջ դասախոսական կազմը դեկանատի հետ միասին տալիս են մեր հարցերի սպառիչ պատասխանները և տեղեկացնում եմ մեզ բոլոր ծրագրերի մասին:
- ✓ Այո, մեզ միշտ հորդորում են մասնակցել գիտաժողովների:
- ✓ Ամբիոնը մշտապես հետևողական է միջոցառումներին մասնակցելու հարցում:
- ✓ Ամբիոնն անում է առավելագույնն ուսանողների համար:
- ✓ Իհարկե խրախուսում են, օգնում են թեմայի ընտրության հարցում:
- ✓ Պարբերաբար ամբիոնի կողմից տեղեկանում ենք գիտաժողովների մասին:

2.3. Ամբիոնում առկա՞ է հետազոտական աշխատանքի, հոդվածների թեմաների հաստատված ցանկ:

Գծապատկեր 5.



Հարցվողների 28%-ն է միայն նշել է «այո» պատասխանը, 72%-ը՝ «ոչ» պատասխանը: «Ոչ» պատասխաններ նշվել են գրեթե բոլոր մասնագիտությունների

ներկայացուցիչների կողմից:

2.4. Տեղյա՞կ եք, թե Ձեր մասնագիտական կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնն ի՞նչ գիտական հետազոտության ուղղվածություններ ունի.

Գծապատկեր 6.



Հարցվողների 22%-ն է միայն նշել է «այո» պատասխանը, 78%-ը՝ «ոչ» պատասխանը: «Ոչ» պատասխաններ նշվել են կրկին գրեթե բոլոր մասնագիտությունների ներկայացուցիչների կողմից:

Այս հարցի և նախորդող հարցի պատասխանների տոկոսային հարաբերությունները գրեթե նույնությամբ կրկնվում են:

«Այո» պատասխան նշողներն ի պատասխան **«եթե այո, ապա նշեք ուղղվածությունը»** հարցին որևէ պարզաբանում չեն տվել, հետևաբար կարող ենք եզրակացնել, որ «այո» պատասխան նշողները նույնպես տեղյակ չեն, թե մասնագիտական կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնն ինչ գիտական հետազոտության ուղղվածություններ ունի:

2.5. «Միջազգային, հանրապետական և ներբուհական ուսանողական գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվություն որտեղի՞ց եք ստանում» հարցին ուսանողները տվել են հետևյալ պատասխանները.

Գծապատկեր 7.



Գծապատկերից պարզ է դառնում, որ ուսանողները միջազգային, հանրապետական և ներբուհական ուսանողական գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվություն հիմնականում ստանում են ԳՊՀ «Facebook» սոցիալական ցանցից, դեկանատից, ուսումնական խորհրդատուի կողմից անձնական էլփոստերին ուղարկված տեղեկատվության միջոցով:

Գծապատկերից երևում է, որ առավել քիչ նշվել են ուսանողական ինքնակառավարման մարմինների անունները, այնինչ այս ուղղությամբ տարվող աշխատանքներում նրանց դերն առավել պետք է լիներ:

2.6. Ունե՞ք հրատարակված գիտական հոդվածներ.

Գծապատկեր 8.



Հարցվողների միայն 8%-ն է (17 հոգի) նշել, որ ունի հրապարկված գիտական հոդված, 92%-ը՝ ոչ:

«Այո» պատասխանները նշվել են առկա ուսուցման Հայոց լեզու և գրականություն, Օտար լեզու և գրականություն, Պատմություն, Իրավագիտություն, Համակարգչային ճարտարագիտություն, Ֆինանսներ /ըստ ոլորտի/, Տնտեսագիտություն մասնագիտությունների ուսանողների կողմից:

2.7. Տեղյա՞կ եք ԳՊՀ-ում ամենամյա կազմակերպվող գիտաժողովի մասին, որին կարող են մասնակցել ոչ միայն դասախոսները, այլև ուսանողները՝ հանդես գալով դասախոսների հետ համատեղ հոդվածներով.

Գծապատկեր 9.



Հարցվողների մեծամասնությունը՝ 73%-ը, նշել են, որ տեղյակ են ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող գիտական նստաշրջանի վերաբերյալ:

«Ոչ» պատասխաններ հիմնականում նշվել են հեռակա ուսուցման Իրավագիտություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտությունների ուսանողների կողմից:

Եթե այո, ապա երբևիցե մասնակցել եք գիտաժողովի.

Գծապատկեր 10.



Հարցվողների 14%-ն է միայն նշել, որ մասնակցել է ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող գիտաժողովին: «Այո» պատասխաններ հիմնականում նշվել են առկա ուսուցման Ֆինանսներ /ըստ ոլոտի/, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/, Տնտեսագիտություն, Պատմություն, Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունների ուսանողների կողմից:

3. Խնդրում ենք ներկայացնել Ձեր առաջարկությունները, նկատառումները ԳՊՀ-ում գիտահետազոտական գործընթացի արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Հարցվողները ներկայացրել են հետևյալ առաջարկությունները.

- ✓ Պարբերաբար կազմակերպել ֆակուլտետային և համալսարանական ուսանողական գիտաժողովներ:
- ✓ Կցանկանայի գիտաժողովների անցկացման մասին պարտաճանաչորեն տեղեկացվեր:
- ✓ Անցկացնել սեմինար և բացատրել, թե ինչպես են գրում գիտահետազոտական աշխատանք:
- ✓ Կարելի է կազմակերպել ուսանողական սեմինարներ և բացատրել, թե ինչպես գրել հոդվածներ, որոնք են գիտաժողովներին մասնակցության չափանիշները:
- ✓ Անցկացնել խորհրդատվություններ դասախոսների մասնակցությամբ, օգնել կողմնորոշվել, թե, որ առարկայից է ավելի նպատակահարմար հոդված գրել:
- ✓ Ցանկալի է, որ գիտաժողովներից առաջ էլփոստերի միջոցով տեղեկացվեն բոլոր ուսանողները, քանի որ ամեն օր ԳՊՀ-ի պաշտոնական կայքէջին չենք կարող հետևել:
- ✓ Առաջին կուրսեցիներին մշտապես տեղեկացնել, խրախուսել:
- ✓ Հաճախակի կազմակերպվել ներբուհական գիտաժողովներ:
- ✓ Պարտադիր պայման համարել դասախոսի գիտական հոդվածի ղեկավար լինելը:
- ✓ Ստեղծել այնպիսի կենտրոն բուհում, որը կզբաղվեր հենց այդ հարցով (տեղեկացնել, հրապարակել կայանալիք գիտաժողովների մասին):
- ✓ Բուհում այս տեսանկյունից վերելքներն ու վայրէջքները շատ կտրուկ են, կամ շատ մասնակցություն կամ չափազանց քիչ, առաջարկում եմ դասավանդել գիտական հետազոտության մեթոդաբանություն դասընթացը 2-րդ կուրսից, խրախուսել հոդվածներ գրելը:
- ✓ Շարունակել ԳՊՀ-ում գիտաժողովների կազմակերպումն ու անցկացումը, դասախոս-ուսանող համահեղինակությամբ զեկուցումների պատրաստումն ու տպագրումը:

4. Եզրակացություններ և առաջարկություններ:

Հարցման արդյունքները ցույց տվեցին հետևյալը.

1. Հարցմանը մասնակցել է ԳՊՀ ուսանողների ընդհանուր թվաքանակի 32%-ը:
2. Հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողներն, առավել պասիվ՝ Բնագիտատնտեսագիտական հեռակա ուսուցման բաժնի ուսանողները:
3. Հարցվողների մեծամասնությունը նշել են, որ տեղյակ են ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող ուսանողական, դասախոսական գիտական նստաշրջանների վերաբերյալ:
4. Հարցվողների 14%-ն է միայն նշել, որ մասնակցել է ԳՊՀ-ում պարբերաբար կազմակերպվող ամենամյա գիտաժողովներին:
5. Հարցվողների մեծամասնությունը նշել են, որ ամբիոնը խրախուսում է զբաղվել հետազոտությամբ և մասնակցել ուսանողական գիտաժողովներին:
6. Ուսանողները միջազգային, հանրապետական և ներբուհական ուսանողական գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվություն հիմնականում ստանում են դեկանատից, ուսումնական խորհրդատուի կողմից անձնական էլփոստերին ուղարկված տեղեկատվության միջոցով:
7. Հարցվողների միայն 8%-ն է (17 հոգի) նշել, որ ունի հրապարկված գիտական հոդված:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածությունն ամբողջովին ուսումնասիրելու և վերլուծելու համար կարևոր են նաև որակական բաց հարցերը:

Հարցվողները ԳՊՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունը բարձրացնելու համար հիմնականում ներկայացրել են հետևյալ առաջնահերթությունները.

- ✓ Գիտահետազոտության մեթոդաբանության նվիրված դասընթացները պարբերական բնույթ կրեն:
- ✓ Պարբերաբար կազմակերպել ֆակուլտետային և համալսարանական

ուսանողական գիտաժողովներ:

- ✓ Գիտական նստաշրջանների վերաբերյալ ակտիվ տեղեկատվության տարածում, իրազեկում:
- ✓ Դասախոս-ուսանող համահեղինակությամբ զեկուցումների պատրաստումն ու տպագրումը:

ՈԱ բաժինն, ամփոփելով հարցման արդյունքները, հաշվի առնելով հարցվողների գնահատականները և պատասխանները, ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

1. ԳՊՀ ուսանողական խորհրդի և գիտական ընկերության աշխատանքների ակտիվացում, նրանց գործողությունների պլաններում առաջնային համարել ուսանողների գիտահետազոտական գործունեության ակտիվացումը:
2. Ուսանողների անհատական աշխատանքները հանձնարարելիս՝ հիմք ընդունել ամբիոնի գիտահետազոտական ուղղվածությունը:
3. Ֆակուլտետներում, ամբիոններում, համապատասխան մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով, կազմակերպել կլոր-սեղան քննարկումներ՝ գիտության հիմնախնդրային թեմաների շուրջ:
4. Գիտահետազոտության մեթոդաբանությանը նվիրված դասընթացների կազմակերպում:
5. Խրախուսել դասախոս-ուսանող համահեղինակությամբ զեկուցումները, հրապարակումները:
6. Միջազգային, հանրապետական և ներբուհական ուսանողական գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվությունը տարածել ԳՊՀ պաշտոնական կայքէջի և ԳՊՀ «Facbook» սոցիալական ցանցի միջոցով:
7. Ուսանողների գիտահետազոտական գործունեության գնահատման և խրախուսման հստակ գործիքակազմի առկայություն և կիրառում:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները կհղվել են համապատասխան

ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն նրանց կողմից և ԳՊՀ ռեկտորատի կամ գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն բարելավմանը միտված միջոցներ՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի ինտեգրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածությունը բարձրացման նպատակով: